

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.151>

Sumgait Tragedy in the Soviet Periodical Press in October 1988

Susanna Serobyán

<https://orcid.org/0009-0005-7552-9851>

Assistant at YSU Chair of History of Neighboring Countries of Armenia

susannaserobyán@ysu.am

Keywords: Artsakh, problem, Sumgait, genocide, press, forgery, falsification, misleading, struggle.

From February 27-29, 1988, in multinational Sumgait, located 25 kilometers from Baku, took place a massacre of the Armenian population, which shocked the civilized society. The author considers those publications of the Soviet press release that referred to the Sumgait events. Central Press disoriented readers, distorting the facts and not giving legal, political and moral assessments of the Sumgait genocide. The Soviet republican and Nagorno-Karabakh press ensured diversity of opinions and a direct connection between the reader and information, covering both causes and consequences of the Sumgait tragedy in 1988.

Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին

Սուսաննա Սերոբյան

ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասիստենտ

Հիմնաբառեր՝ Արցախ, հիմնախնդիր, Սումգայիթ, ցեղասպանություն, մամուլ, խեղաթյուրում, կեղծիք, ապակողմնորոշում, պայքար:

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25-30 կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանող, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը: Հեղինակը քննության էա ոնում 1988թ.հոկտեմբեր ամսին խորհրդային մամուլի սումգայիթյան իրողություններին վերաբերող հրապարակումները: Խորհրդային կենտրոնական մամուլը ապակողմնորոշեց ընթերցողին՝ խեղաթյուրելով փաստերը և չտալով սումգայիթյան ողբերգության

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 151-161

Received: 05.06.2024

Revised: 06.07.2024

Accepted: 31.08.2024



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988թ. Հոկտեմբեր ամսին խորհրդային հանրապետական և ԼՂ մամուլը ապահովեց բազմակարծություն և հանրույթի ու տեղեկատվության իրական կապ լուսաբանելով սումգայիթյան ողբերգության արմատները և պատճառահետևանքային կապերը:

Сумгаитская трагедия в советской периодической печати за месяц октябрь 1988г.

Сусанна Серобян

Ассистент кафедры истории сопредельных стран Армении ЕГУ

Ключевые слова: Арцах, проблема, Сумгаит, геноцид, пресса, подлог, фальсификация, дезориентация, борьба.

27-29 февраля 1988 года в многонациональном Сумгаите, находящемся в двадцати пяти километрах от Баку, произошла резня армянского населения, которая потрясла цивилизованное общество. Автор рассматривает те публикации советской периодической печати, которые касались сумгаитских событий. Советская центральная пресса дезориентировала читателей, искажая факты и не давая юридическую, политическую и моральную оценку сумгаитскому геноциду. За октябрь 1988 года местная пресса смогла обеспечить плюрализм мнений и прямую связь между обществом и прессой, освещая причины и следствия сумгаитской трагедии.

* * *

Ներածություն: 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումն ուղենիշ դարձավ պատմական նոր իրողության, որը որակվեց իբրև Արցախյան շարժման նոր փուլ՝ լի դրամատիկ իրադարձություններով: Արցախյան շարժման նպատակը հայության մի հատվածի՝ իր բնօրրանում ազատ ու անվտանգ ապրելու և արարելու իրավունքի ապահովումն էր և, որպես դրա իրականացման վստահելի երաշխիք, ԼՂԻՄ-ի՝ Խորհրդային Ադրբեջանի կազմից դուրս բերումն ու վերամիավորումը մայր Հայաստանին: Եվ այն ժամանակ, երբ ողջ հայությունը սահմանադրական ճանապարհով պայքարում էր պատմական արդարության վերականգնման համար, իսկ ԽՍՀՄ –ի ղեկավարները ճամարտակում էին խորհրդային ժողովուրդների եղբայրության ու բարեկամության մասին և հավաստիացնում, թե իրենց նպատակն է կարգավորել չլուծված կամ արհեստածին լուծում ստացած հիմնախնդիրները, ադրբեջանական իշխանությունների կողմից հերթական անգամ կյանքի կոչվեցին մեղադրանքները, սպառնալիքներն ու բռնությունները, ավելին՝ խայտառակ ու ամոթալի, քաղաքակիրթ հանրությանը բնորոշ պատվի ու բարոյականության համակարգից դուրս, մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունը՝ ցեղասպանությունը:

1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25 -30 կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթում սանձազերծվեց հայության սպանող, որը ցնցեց քաղաքակիրթ հանրությանը: Իշխանությունների կողմից սանձազերծված հակահայկական քարոզչությունը լայն արձագանք

գտավ «ինտերնացիոնալ» հորջորջվող Սումգայիթում, ուր ադրբեջանական խուժանը տեղի կուսակցական – պետական մարմինների հովանավորությամբ ու թողտվությամբ, կրոնական մոլեռանդությամբ և թյուրքական իր ձեռագրով, «Մահ հայերին» կարգախոսով, ամենավայրագ, բարբարոս, տմարդի ու ստոր միջոցներով երեք օր անընդմեջ արյան խրախճանքի գոհ դարձրեց քաղաքաբնակ հայությանը: Ծանր վիրավորվեցին ու խոշտանգվեցին հազարավոր անպաշտպան մարդիկ: Ջարդարարների գործողություններն ուղեկցվեցին հայերի բնակավայրերի ավերումով և անգուսպ թալանով: Միութենական կենտրոնական իշխանությունը միայն փետրվարի 29-ի գիշերը գորք մտցրեց Սումգայիթ՝ քաղաքից դուրս բերելով ողջ մնացածներին: Բաքվի մոտ տեղակայված խորհրդային բանակի ստորաբաժանումներն «ուշացան» ճիշտ այնքան, որքան անհրաժեշտ եղավ հայ ազգաբնակչության կոտորածն իրականացնելու համար:

Երեք տասնամյակից ավելի ժամանակ է մեզ բաժանում այդ ողբերգությունից: Եվ մեր օրերում, երբ Արցախի հայաթափումից հետո շարունակվում են ադրբեջանական ագրեսիվ նկրտումները, երբ Արցախյան հիմնախնդիրը մեզանում ընկալվել և ընկալվում է որպես ազգային ինքնության և պետականության պահպանման խնդիր, երբ ցեղասպանության հրեշավոր քաղաքականության դատապարտումը մնում է միջազգային հանրույթի օրակարգում, առավել, քան երբևէ կարևորվում է Արցախյան շարժման նոր փուլում տեղի ունեցած իրադարձությունների անաչառ ու անկողմնակալ վերլուծությունը, մասնավորապես խորհրդային պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլում սումգայիթյան ողբերգությունը ներկայացնող հոդվածների բովանդակության քննախոսությունը և պատմական ճշմարտության վերհանումը: Մեր նախորդ հրապարակումներում մենք փորձել ենք համակողմանի քննական վերլուծության ենթարկել 1988թ. մարտ – սեպտեմբեր ամիսներին սումգայիթյան ողբերգությունը ներկայացնող հոդվածները: Ներկա հոդվածի նպատակն է 1988թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում խորհրդային մամուլում տպագրված հոդվածների քննական մեկնությամբ հիմնավորել այն գաղափարը, որ փետրվարյան արյունոտ դեպքերի հետ կապված բազմիցս դրսևորվեց մամուլի քաղաքական սնանկությունը. «վերակառուցման լուսարձակ» խորհրդային մամուլն ի սկզբանե միտումնավոր կեղծելով Արցախյան հիմնախնդրի էությունը՝ նաև խայտառակ ու ամոթալի խեղաթյուրման մատնեց սումգայիթյան դառը ճշմարտությունը վերհանող փաստերը՝ չտալով սումգայիթյան ողբերգության իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը, չորակելով այն որպես ցեղասպանություն: 1988թ. հոկտեմբեր ամսին խորհրդային հանրապետական և ԼՂ մամուլը ապահովեց բազմակարծություն և հանրույթի ու տեղեկատվության իրական կապ՝ լուսաբանելով սումգայիթյան ողբերգության արմատները և պատճառահետևանքային կապերը: Մեր կողմից հետազոտությունն իրականացվել է պատմաքննադատական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ: Հետազոտության իրականացումից եզրակացությունը մեկն է. ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ Արցախյան հիմնախնդրում հնարավոր չէ քաղաքական միջոցներով կասեցնել հայերի՝ օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, գործի դրեցին ուժն ու բռնությունը՝ ոտնահարելով համամարդկային իրավունքը:

ԽՍՀՄ ԳԽ Նախագահության արտահերթ նիստի հուլիսի 18- ի որոշումը բնավ չկասեցրեց Արցախյան համաժողովրդական շարժումը, ընդհակառակը, 1988 թվականի երկրորդ կեսը մեր պատմության մեջ արձանագրվեց որպես հայ ժողովրդի հոգևոր հետագա արթնացման, ստի ու

Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին

կեղծիքի դեմ ահագնացող բողոքի ու համառ պայքարի և արդարության երաշխիքների փնտրտուքի ժամանակաշրջան:

Չնայած հայության բազմաթիվ բողոքներին՝ խորհրդային պաշտոնական մամուլը 1988թ. Երկրորդ կեսին ևս կարծես գաղափարական պատերազմ էր հայտարարել մեր ժողովրդին և հնարավոր ու անհնար միջոցներով ցավալիորեն շարունակում էր փաստերը կոծկելու, Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների միջև հավասարության նշան դնելու, հայերին ու նրանց պահանջը ծայրահեղական – ազգայնամոլական որակելու, Սումգայիթը մութ ուժերի սադրանք համարելու քաղաքականությունը, հայության արդարացի պահանջները պաշտպանող սոցիալական գործողությունների ձևերի՝ հանրահավաքների, գործադուլների, հացադուլների դատապարտումը: Այս փուլում ևս ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների քաղաքական ու բարոյական «խլությունը», վարչատարածքային սահմանների անփոփոխելիության հիմքով միակողմանի մոտեցումները անհնարին դարձրին ՋԼՄ-ներում սումգայիթյան ողբերգությանը հասարակական համապատասխան հնչեղություն հաղորդելը: Ավելին, ԽՍՀՄ ղեկավարության սպասողական մարտավարության հետևանքով ամիս առ ամիս ոչ միայն անտեսվեց ու բարդացավ Արցախյան հիմնախնդրի արդարացի ու խաղաղ լուծման իրագործման հնարավորությունը, այլև ակնհայտորեն թերագնահատվեց կամ անտեսվեց վտանգավոր և անվերահսկելի բնույթի իրադարձությունների ծավալման հեռանկարը: Գաղտնիք չէ, որ ազգամիջյան վեճերի ամեն մի հաստատուն և արդարացի լուծում խարսխվում է կողմերի իրավահավասար երկխոսության կայացման, հիմնախնդրի էության համակողմանի վերլուծության և փոխզիջումային մեխանիզմների հիմամբ, իսկ վերջիններիս գործողության համար անհրաժեշտ է քաղաքական իրական երաշխիքների առկայություն, որոնց փոխարեն խորհրդային ղեկավարությունը և նրա «մունետիկ» ՋԼՄ-ները ողջ հայության ազգային զգացումները շարունակեցին որակել որպես ազգայնամոլություն, հիմնախնդրի էության լուսաբանումից շեշտը փոխադրեցին գործողության մեթոդների վրա, անտեսեցին ազգային ինքնագիտակցության քաղաքական ներուժը՝ վերջինիս մղելով ընդդիմադիր դաշտ՝ փոխանակ այն ծառայեցնելու երկրի վերակառուցման ու ժողովրդավարացման շահերին: Արդարության յուրօրինակ իրական քաղաքական երաշխիք կարող էր դառնալ նաև սումգայիթյան ցեղասպանության հրապարակավ դատապարտումը: Սակայն դրա փոխարեն, ձգտելով «հանդարտեցնել» հանրության, բայց միաժամանակ հավատարիմ մնալով ենթակայական ու կողմնակալ տեղեկատվություն հաղորդելու սկզբունքին, լրագրողներ Ն.Օվչարենկոն և Զ. Կադյմբեկովը հերթական հոդվածում գրեցին, թե Սումգայիթում մթնոլորտը հանգիստ է, և որպես դրա փաստարկ նշեցին հայազգի բնակչության հետ իրենց ունեցած գրույցը [Н.Овчаренко, З.Кадымбеков, Урокиирешения, “Правда”,10.11.1988]: Այդ փաստարկը կեղծ էր ու անտրամաբանական, որովհետև հեղինակները քաջատեղյակ էին, որ այլևս ոչ միայն Սումգայիթում, այլև Ադրբեջանական ԽՍՀ-ի ողջ տարածքում չկար հայության ֆիզիկական, սոցիալական և հոգևոր պաշտպանվածության որևէ երաշխիք, և այս իրողությունը հաստատում էին Խոջալուի սեպտեմբերյան դեպքերը: Հեղինակները լուրջ էին մատնում նաև այն փաստը, որ ադրբեջանական իշխանությունները Շուշիում կամայականորեն վերաբնակեցրել էին երկու հազար ադրբեջանցու, որն ավելի էր սրել իրավիճակը ԼՂԻՄ-ում: Հոդվածում սումգայիթյան

դատավարության վերաբերյալ նշվում էր, որ արդեն քննության է առնվել 19 գործ, սակայն դատավարությունը կերկարաձգվի, քանի որ ռիշխանությունը ձեռքակալել է հարյուրից ավելի մարդու: Իրադարձությունների անտեղյակ ընթերցողի մոտ այն տպավորությունն էր ստեղծվում, թե խոսքը գնում է Սումգայիթում խմբավորված խուլիգանների ու ծայրահեղականների իրագործած, միմյանց հետ բացարձակ կապ չունեցող, աննշան հանցագործությունների և ոչ թե ցեղային պատկանելության պատճառով նախապատրաստված ու իրագործված սպանդի մասին: Փաստորեն այս հրապարակումով ևս խորհրդային պաշտոնական մամուլը հերթական անգամ ջուր էր լցնում աղբբեջանական քարոզչության ջրաղացին, քանզի աղբբեջանական «մտավորականները», կորցնելով քաղաքացիական ու գիտական խիղճը, լուտանք էին թափում հայ ժողովրդի ու նրա գիտնականների գլխին՝ անամոթաբա բսումգայիթյան վանդալիզմը համարելով Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ձեռքի գործը: Այստեղ պետք է արժանին մատուցել հայ մտավորականներին և նշել, որ այս փուլում Արցախյան հիմնախնդրի լուսաբանման գործում հանրապետական մամուլում նկատվեց որոշակի աշխուժացում և բունիաթովների և այլոց հրապարակումներին տրվեց փաստարկված ու լուրջ պատասխան [З.Буниятов, Почему Сумгаит, ЭЛИМ-АНАз.ССР, N 19,1988: Տե՛ս նաև “Коммунист”, 07.07.1988. Մենք բնավ հարկ չենք համարել անդրադառնալ այս հրապարակմանը՝ այն ծայրից ծայր համարելով ցնդաբանություն]:

1988թ. հոկտեմբերի 21-ին, ապա հոկտեմբերի 28-ից – նոյեմբեր ամիսներին շարունակվում էր սումգայիթյան եղեռնագործության ճիվաղների հատուկենտ դատավարական ֆարսը, որն ավելացնում էր անվստահությունն ու անորոշությունը: Մարդիկ ճշմարտության և արդարության քաղց ունեին, մինչդեռ Սումգայիթի թեման համառորեն չէր ենթարկվում հրապարակայնության օրենքներին և շատ դանդաղ էր բացահայտվում իր ամբողջականությամբ, քանի որ ողբերգությունից ամիսներ անց ևս խորհրդային կենտրոնական մամուլում իրականում անտեսվում էր սումգայիթյան ողբերգության իմաստավորված ընկալման անհրաժեշտությունը: Արցախյան շարժումը թևակոխել էր համաժողովրդական գործողությունների նոր փուլ, մինչդեռ կուսակցական – պետական դիրքորոշումն այդ հարցում հեռու էր վաղվա չափանիշներով կողմնորոշումից, իսկ խորհրդային կենտրոնական մամուլը՝ ընթերցողին մտահոգող հարցի շուրջ իրական ու գործուն երկխոսության հաստատումից ու նրա հետ գործարար շփումից: Կենտրոնական մամուլը՝ հավատարիմ Արցախյան հիմնախնդրում պետական – կուսակցական դիրքորոշմանը, չէր պաշտպանում գլխավորը՝ Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու գաղափարը, և հենց այս միտումով էլ սքողում էր Աղբբեջանի հայահալած քաղաքականությունը, կոծկում սումգայիթյան ցեղասպանությունը: Խորհրդային կենտրոնական մամուլում ոչ միայն համակողմանիորեն չէին լուսաբանվում սումգայիթյան իրադարձությունները, այլև չէր հնչում վերջիններիս իրավաքաղաքական ու բարոյական գնահատականը:

Խորհրդային ոչ պաշտոնական մամուլում շարունակվում էր սումգայիթյան ողբերգության ակունքների և ճշմարտության փնտրտուքը, ստահող հորինվածքների դեմ պայքարը. Հրապարակվեցին մի շարք հոդվածներ, որոնց հեղինակները փորձեցին կարևոր ու ծանրակշիռ փաստերով կրկին լուսաբանել սումգայիթյան ողբերգության մանրամասները, վերհանել այդ իրողության սկզբնապատճառներն ու հետևանքները [И.Буркова, Сумгаитский процесс, “Советский Карабах”, 23.11.1988]: Միաժամանակ հոդվածագիրները հանդես եկան խորհրդային

Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին

ղեկավարության գործունեության նպատակներն ու միջոցները ստեղծված ռեալ իրավիճակներին համապատասխանեցնելու, ծավալվող իրադարձություններին համարժեք վերաբերմունք դրսևորելու համարձակ ու փաստարկված կոչերով:

Սումգայիթյան ողբերգությունը ոչ թե ազգամիջյան հակամարտության դրսևորում է, ինչպես որակում էր պաշտոնական մամուլը, այլ հետևանք այն իրողության, որ հայության կողմից հարց էր բարձրացվել՝ ԼՂԻՄ-ը վերամիավորելու Հայաստանին: Այս միտքն էր հաստատում Վ. Շեյնիսը և ընդգծում, որ ԽՍՀՄ-ում ազգային հարցում պետք է իրագործել վերակառուցման սկզբունքները՝ ժողովրդավարությունը, պատասխանատվությունն ու հրապարակայնությունը, իսկ վերջինս «չգործեց այն պահին, երբ առավել քան հարկավոր էր», [В.Шейнис, Уроки карабахского кризиса, “Век 20-ый и мир”, N10, 1988]: Հեղինակը Սումգայիթն անվանում էր արսուրդի արյունոտ թատրոն / Սումգայիթի Խաղաղության փողոցում տեղի էր ունեցել հայերի արյունոտ սպանողը – Ս.Ս./, որի գլխավոր դերակատարները մոռացել էին ինտերնացիոնալիզմի ոգով իրենց դաստիարակության մասին և հայերին դարձրել էին իրենց՝ «արդարության մարտիկների» սաղիստական գործողությունների զոհեր: Նա հույս էր հայտնում, որ իշխանությունները պետք է դարաբաղյան ճգնաժամից դասեր առնեն, իսկ «ադրբեջանական ժողովուրդը կարող է գիտակցել, ... որ ավելի լավ է բարեկամ ունենալ իր տան կողքին, քան դրա մեջ բռնի ուժով պահել մեկ այլ ժողովուրդի» [В.Шейнис, Уроки карабахского кризиса, “Век 20-ый и мир”, N10, 1988]:

Հեղինակը մեղադրում էր իշխանություններին անհետևողականության, Արցախյան շարժման ներկայացուցիչների հետ երկխոսություն չծավալելու համար և առաջարկում Ազգությունների խորհրդի հատուկ հանձնաժողովի համար սահմանել բարձր կարգավիճակ՝ ճգնաժամից դուրս գալու փոխզիջողական տարբերակ մշակելու նպատակով, սակայն չէր տալիս այն հարցի պատասխանը, թե ինչու «ինտերնացիոնալիզմի ոգով սողորված» քաղաքում ոչ ոք չբռնեց մարդասպանների ձեռքը, եթե վերջիններս լուր սադրիչներ էին: Վ.Շեյնիսը դարաբաղյան ճգնաժամ իդասերից մեկն էր համարում Սումգայիթում սոցիալական ենթակառուցվածքների և բնակարանային շինարարության տեմպերի հետ մնալը քաղաքի արդյունաբերական զարգացման մակարդակից և ծայրամասերում ինքնակամ կառույցների՝ նախալստրոյների գոյությունը, ինչը անտեսվել էր իշխանությունների կողմից, մինչդեռ դրանցում ծաղկում էին թմրամոլությունը, ալկոհոլիզմը, գողությունն ու հանրային զանազան արատները, մինչդեռ ցանկացած իրավիճակ շատ ավելի հեշտ կլիներ հսկողության տակ առնելը՝ նախքան վերջինիս սրումը: Նա սումգայիթյան սպանողը որակում էր որպես սոցիալական պայթյուն, որի դետոնատորը Լեռնային Ղարաբաղի խնդիրն էր: Հողվածագիրն իրավամբ բարձրաձայնում էր այն գաղափարը, որ ազգամիջյան խնդիրների լուծման ժամանակ կենտրոնական իշխանության կողմից ոչ միայն չէր դրսևորվում անհրաժեշտ կամք և հաստատակամություն, այլև շատ դեպքերում տեղի էր ունենում իրավիճակների արհեստական պարզունակացում կամ էլ առաջ էին քաշվում «տրաֆարետային լուծումներ»՝ հղի վտանգավոր հետևանքներով: Սակայն հողվածում հստակորեն չէր նշվում, որ խորհրդային երկրում ինտերնացիոնալիզմն անցյալում էր և իրականում վաղուց էր վերածվել բոլշևիկյան տրաֆարետի, որ Խաղաղության անունը կրող փողոցում իրագործված հայության դաժան սպանողով ի չիք էր դարձել հայ – ադրբեջանական բարեկամության և խաղաղության խորհրդային բոլշևիկյան տրաֆարետը: Եվ այսօր մենք կիսում ենք մեր բոլոր այն գործընկերների

տեսակետը, որոնք միանգամայն ճիշտ բացատրում են իրական խաղաղության հաստատումը ցեղասպան մտածողության բացահայտ կրողների հետ:

Թերևս, Վ. Շեյնիսի կողմից բարձրաձայնած ամենակարևոր միտքը հետևյալն էր. «...ազգերի ինքնորոշման իրավունքը ըստ էության վեր է պետական սահմաններից» [В.Шейнис, Уроки карабахского кризиса, “Век 20-ый и мир”, N10, 1988]:

Լրագրող Անդրեյ Պրավնիկովը սուսմագայիթյան իրողությունը դիտում էր որպես ԽՍՀՄ ազգային քաղաքականությունում թույլ տված կոպիտ ու լուրջ սխալների հետևանք. «Սուսմագայիթը ստիպեց մեզ ընդունել ազգային քաղաքականության մեջ թույլ տված սխալների լրջությունը» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль”, Московские новости”, N 44.30 .10.1988: Տե՛ս նաև “ Коммунист”, N 257, 07.11.1988]: Նա նշում էր, որ «... դատավարությունը փորձում է երևան հանել բոլորի հիշողության մեջ մնացած փետրվարյան իրադարձությունների էությունը», սակայն «...դատարանը չի կարողանում պատասխանել զոհերի հարազատների՝ նորից ու նորից կրկնվող հարցին. ինչպե՞ս կարելի է հանգիստ կանգնել ու նայել, թե ինչպես են մարդուն բախերով խփելով սպանում կամ այրում» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль”, Московские новости”, но.44.30 .10.1988: Տե՛ս նաև “ Коммунист”, N257, 07.11.1988]: Նա իրավամբ գտնում էր, որ Սուսմագայիթում անպատժելիության զգացումը բնորոշ է եղել ազգային ակտիվ ամբոխին: Սրանով նա, փաստորեն, քննության էր առնում նաև ցեղասպանության և զանգվածային սպանությունների հոգեբանությունը՝ ընդգծելով, որ ամբոխում մարդը կորցնում է իր անհատական գիտակցության մակարդակը, նա դրսևորում է գրեգարային /հոտային/ վարքագիծ՝ բնավ չունենալով սեփական վարքագծի համար պատասխանատվության զգացում [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль”, Московские новости”, но.44.30 .10.1988: Տե՛ս նաև “ Коммунист”, N 257, 07.11.1988: Տե՛ս նաև Л.Гозман, Е.Шестопал, Политическая психология, Психология геноцида и массовых убийств, Ростов-на –Дону, 1998]: Հեղինակը ողբերգության վկաների փաստարկներով հակադրվում էր այն հայտարարություններին, թե Սուսմագայիթում վտանգ էր սպառնում բոլոր այլազգիներին. «Ո՛չ: Աղբրեջանցիներին, ռուսներին և այլազգիներին վտանգ չէր սպառնում» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль, “ Московские новости”, но.44.30 .10.1988]: Նա ընդգծում էր այն կարևոր իրողությունը, որ ամենաթողության զգացողությունը հրահրել է մարդասպաններին, որովհետև «... անհնար է մոռանալ, որ սուսմագայիթյան մղձավանջի օրերին միլիցիան, քաղաքի իշխանությունները չեն կանգնեցրել ավազակներին ու մարդասպաններին: ...Անհրաժեշտ է գնահատական տալ նրանց գործողություններին կամ անգործությանը» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль”, Московские новости”, но.44.30 .10.1988]: Ա. Պրավնիկովն իրատեսորեն նշում էր, որ «...ԽՍՀՄ Գերագույն դատարանը նախագահող Ռայմոնդ Բրիգեն քննում է դեպքերը, բայց ոչ մարդասպանների զգացմունքները», որ «...որպեսզի կյանքը նորմալ հուն մտնի, մարդիկ պետք է զգան, որ արդարության երաշխիքներն աներեր են», ու բոլորը «...«միասնական են չարի շարժիչ ուժերը ոչնչացնելու ձգտմանմեջ» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль”, Московские новости”, но. 44.30 .10.1988]:

Արժանին մատուցենք հողվածագրին և կասկածի տակ չդնենք չարիքը արմատախիլ անելու վերջինիս ազնիվ ձգտումները, սակայն հավելենք նաև, որ հողվածում հեղինակը անտեսում էր սուսմագայիթյան աներևակայելի հանցագործություններից քաղաքակա նեգրակացությունների կարևորությունը, մասնավորապես խուսափում էր դաժան իրողությունները մոլի

Սոււմգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին

հայաստյացության սահմոկեցուցիչ դրվագներ որակելուց և դրսևորում էր ոչնչով չհիմնավորված ավատեսություն, երբ գրում էր, թե երկրի գերագույն դատարանում հանցագործությունների շղթայից ահմեղովի, ջաֆարովի և իսմայիլովի կոնկրետ գործի լսումները «...ինչ – որ չափով քաղաքական գնահատական է» [А.Пральников, Сумгаитское дело: факты и боль, “Московские новости”, но.44.30 .10.1988]:

Չնայած սոււմգայիթյան սահմոկեցուցիչ ողբերգությանը, «հայերը աղբրեջանցիներին վերաբերվում են առանց ատելության», այս իրողությունն էր ընդգծում «Մեմյա» շաբաթաթերթի հատուկ թղթակից Ա.Մերգենը և ինքնաքննադատաբար հավելում, որ «... մենք՝ ժուռնալիստներս, շատ մեծ մասնակցություն ունեցանք այն բանին, որ ամեն ինչ խճճվեր» [“Семья”, Ереван - Степанакерт, В особом положении, М., N48, 26.10.1988: Տե՛ս նաև, «Երեկոյան Երևան», 28.10.1988]: Նա խոր ափսոսանք էր հայտնում այն բանի համար, որ այդօրինակ հանցագործություններ իրագործողները ոչ միայն անպատիժ են մնացել, այլև կարեկցանքի ոչ մի խոսք անգամ չեն ասել տուժածների հասցեին: Մինչդեռ հարկավոր էր սրտացավություն և տեղի ունեցածի իմաստավորում, մանավանդ որ հայերը, չնայած ամենի, դրսևորում են լավատեսություն և «բոցաշունչ հավատ վերակառուցման նկատմամբ» [“Семья”, Ереван -Степанакерт, В особом положении, М., N48, 26.10.1988: Տե՛ս նաև «Երեկոյան Երևան» 28.10.1988]:

Ցավոք, Ա. Մերգենը ևս սոււմգայիթյան սպանդից ութ ամիս անց սահմանավակվում էր արձանագրելով միայն, որ «Սոււմգայիթը որպես փուշ խրվել է / հայ –Ս.Ս./ մարդկանց սիրտը» և «այդօրինակ հանցագործությունները անպատիժ չեն կարող մնալ ... իրավաբանական ու բարոյական նորմերով», որ ԼՂԻՄ-ի տագնապահարույց վիճակը «մարզի ղեկավարների թողած ծանր ժառանգության և ներկայիս բարդ ժամանակների միագումար հետևանքն է» [“Семья”, Ереван -Степанакерт, В особом положении, М., N48, 26.10.1988: Տե՛ս նաև «Երեկոյան Երևան» 28.10.1988]: Ճիշտ է, հեղինակն իր հողվածում դատապարտում էր խորհրդային իրականությանը հարիր սխեմատիզմն ու կարծրատիպերը, սակայն ինքը ևս տուրք էր տալիս դրանց և ,ավելին, առաջնորդվում երկակի ստանդարտներով, երբ մի կողմից գրում էր, որ հասկանալու համար, թե որչափ սասանվել է հավասարակշռությունը, հարկավոր է մտնել այն հանրակացարանը, որը զբաղեցրել են Սոււմգայիթից փրկվածները, իսկ մյուս կողմից էլ փորձում էր կրկին իրավիճակների միջև հավասարության նշան դնել, երբ ազգայնամոլության մեջ էր մեղադրում նաև հայերին և եղելությունն ընդհանրացնում և «իմաստավորում» հետևյալ կերպ՝ «... ազգայնամոլությամբ կուրացած մարդիկ կորցրել են միմյանց նկատմամբ կարեկցության զգացումը» [“Семья”, Ереван - Степанакерт, В особом положении, М., N48, 26.10.1988: Տե՛ս նաև «Երեկոյան Երևան» 28.10.1988]: Հողվածագիրը զգուշորեն ձեռնպահ էր մնում նաև Արցախյան շարժման համատեքստում աղբրեջանական մոլի հայաստյացության աղաղակող դրսևորումների բարձրաձայնումից:

Ալ.Վասիլևսկին «Ամպ է լեռներում» հողվածում գրում էր, որ «ամեն ինչ սկսվեց Ստեփանակերտում... հայկական բնակչության... հանրահավաքներով ,... ավարտվեց Սոււմգայիթով» [Ал. Василевский, Туча в горах , “Аврора, ”, но 10, стр.8-18]: Հեղինակը իրավամբ նշում էր, որ մամուլում Սոււմգայիթին նախորդած դեպքերը չլուսաբանելը կամ աղավաղված ներկայացնելը պարարտ հող դարձան առավել մեծ ողբերգության. «Փետրվարի 14-ի գիշերը, երբ Ստեփանակերտում առաջին դեմոնստրացիան էր, Աղբրեջանի կոմկուսի կենտկոմի բաժնի վարիչ

Սաստիկը հայտարարեց, որ հազարավոր աղբբեջանցիները անկացած պահի պատրաստ են ներխուժել Ղարաբաղ և ջարդ կազմակերպել» [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]: Սումգայիթին նախորդած Ասկերանի իրադարձությունները ևս ահազանգ չեղան ղեկավարության համար: Նա հաստատում էր այն միտքը, որ Ադդամում քսաներկուամյա Ալի Հաջինի սպանության մեջ չկա և ոչ մի հայի մեղավորությունը, որ նրա եղբոր՝ քսանինամյա Արիֆ Հաջինի հավաստիացմամբ իր կրտսեր եղբայրը սպանվել էր աղբբեջանցի միլիցիոնների կողմից, մինչդեռ այդ ճշմարտությունը ևս չէր բարձրաձայնվել [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]: Հեղինակը սումգայիթյան ողբերգության մի շարք վկաների բերանով արձանագրում էր աղբբեջանական հայատյացության սարսափելի դրվագները և իշխանությունների հանցագործ անտարբերությունն ու թողնվածությունը. «նույնիսկ բացառիկ վայրագության դեպքերը չեն վրդովել նրանց հոգիները» [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]: «Եվ դեռ պետք է բացահայտել, թե ինչպես պատահեց, որ միլիցիան և շտապ օգնությունը լռության մատնեցին ահազանգերը, որ քաղաքում այդ օրերին բազմաթիվ հեռախոսահամարներ անջատված էին կամ թե՛ ո՞վ է պատասխան տալու «տանը նստեցեք, խուճապի մի մատնվեք» խորհրդի համար այն դեպքում, երբ անհրաժեշտ էր շտապ տարհանել մարդկանց» [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]: Ալ.Վասիլևսկին արձանագրում էր նաև հանրապետական ու միութենական ԶԼՄ-ների անտարբերությունը, որոնք իրենց հերթին զուտ կենացաճառեր էին ասում ժողովուրդների բարեկամության մասին, խեղաթյուրում իրականությունը, հրահրում անհանդուրժողություն ու հայատյացություն. «...Ողբերգությունն այն է, որ աղբբեջանական կառավարությունը տուժածներին ցավակցություն չհայտնեց, չդատապարտեց եղեռնը, ինչպես հարկն է: Ողբերգությունը սպանվածների թվի մեջ չէ: Գլխավորն այն է, որ մեկ հանրապետության մեջ մի ժողովուրդ ձեռք բարձրացրեց մյուսի վրա: ...Եվ վերջինը: Զանգվածային լրատվության հանրապետական միջոցները զբաղվում էին սեփական ժողովրդի դեմ գաղափարախոսական պատերազմով: Կենտրոնական մամուլը ևս իր բարձրության վրա չէր: Օվջարենկոն «Պրավդայում» գրում էր. «Հայերի բնակարաններ են ներխուժել կողոպտելու նպատակով»: Մի՞ թե իրեն հարգող ժուռնալիստը կարող է այդպիսի բան թույլ տալ: Եթե մենք մտածում ենք լուծել մեր ժողովուրդների գոյության պրոբլեմը, ամենից առաջ պետք է բոլոր փաստերը քննենք հանգամանորեն ու հրապարակավ» [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]:

Հեղինակն իրավամբ մեղադրում էր օրինապահ մարմիններին հանցագործ անտարբերության ու անգործության, ավելին՝ գազազած բանդիտներին / ոչ թե խուլիգաններին –Ս.Ս./ խրախուսելու համար, որ սպանեցին ու բռնաբարեցին անմեղ ու անպաշտպան մարդկանց, թալանեցին 200 բնակարան ու 50 խանութ, այրեցին 50 ավտոմեքենա... [Ալ. Василевский, Туча в горах, «Аврора», но 10, стр.8-18]:

Ալ.Վասիլևսկին, ինչպես նկատեցինք, ողբերգության նականատեսների բերանով ջարդարարներին համարձակորեն կոչում էր գազազած բանդիտներ, ողբերգությունն անվանում եղեռն, կոչ էր անում վերջինիս բոլոր մասնակիցներին զոջալ, քանի որ «**Խիղճն ազգային կատեգորիա չէ** / ընդգծումը մերն է –Ս.Ս./»: Անշուշտ, Ալ. Վասիլևսկին բարձրաձայնում էր ճշմարտությունները Սումգայիթի մասին, որոնք այնպես հուզում էին հայերիս: Հողվածագիրն անդրադառնում էր նաև Լեռնային Ղարաբաղի պատմական տեղեկանքին, ինչը ևս հույժ կարևոր

Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988 թ. հոկտեմբեր ամսին

էր. «...Ուրեմն համաձայնեք պատմական տեղեկանքին. Լեոնային Ղարաբաղը 1923 թվականին / նկատի է առնվում 1923 թ. հուլիսի 7-ին ԼՂԻՄ-ի ստեղծումը -Ս.Ս./ դարձավ Ադրբեջանի բաղկացուցիչ մասը մեր երկրի միջազգային դրության մեջ առկա բարդությունների պատճառով» [Ал. Василевский, Туча в горах, «Аврора», , но 10, стр.8-18]: Չնայած հեղինակը գերծ էր մնում ազգային հարցում լենին-ստալինյան կամայականությունների, տասնամյակներ շարունակ Ադրբեջանի հայահալած քաղաքականության էության մեկնաբանումից, այնուամենայնիվ նրա հեղինակած հոդվածը սոցոքոված էր մեծ հումանիզմով ու քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության բարձր գիտակցումով:

ԵՊՀ Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Ս. Ջոլյանի՝ Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի հանդեսի հոկտեմբերյան համարում տպագրած «Տան խաղաղությունը. Եղբայրություն և արդարություն» բաց նամակը հպարտ կոչ էր՝ ապրելու պատվով և խղճի մտք: Հեղինակը ցավով էր արձանագրում, որ Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումից խորհրդային ռուսական մտավորականությունը ամենահազվադեպ բացառությամբ մի կողմ էր քաշվել՝ մոռացության տալով իրական եղբայրության գաղափարը: Մտավորականության քար անտարբերության պայմաններում Արցախյան հիմնախնդիրը քննարկվում էր ոչ «ո՞վ ու՞մ տիրույթում՝ Ադրբեջանը Հայաստանին, թե՞ Հայաստանը Ադրբեջանին» և պարառում էր լոկ կոնյուկտուրային նկատառումներ: Մինչդեռ հիմնախնդրի լուծումը պահանջում էր արդարություն, իրավիճակի փոփոխություն, բայց ոչ երբեք զուտ կոնյուկտուրային նկատառումներ: Հեղինակը իր մեծ երախտիքի խոսքն էր հղում բոլոր ազնիվ մտավորականներին, այդ թվում նաև Տալիխից բանասեր Միխայիլ Լոտմանին, որը էստոնական ռադիոյի համար մեկուկես ժամանոց հաղորդում էր պատրաստել Արցախյան հիմնահարցի և սումգայիթյան սպանդիմասին. «Բայց ինչու՞ միայն էստոնացիները կարող են իմանալ ճշմարտությունը Սումգայիթի մասին» [Ս.Ջոլյան, Տան խաղաղությունը. Եղբայրություն և արդարություն, Նամակ Երևանից, . «Երեկոյան Երևան» 11.11.1988,;Տե՛ս նաև «Век 20-ый и мир», 10., 1988]: Նամակի հեղինակը կատարում էր կարևոր հարցադրում, որը հարկ էնք համարում նամակից մեջբերել առանց կրճատումների. . «Մեր հասարակության մասին ի՞նչ կասի գալիք ժամանակների պատմաբանը, երբ պրպտումներ կատարելով 1988 թվականի թերթերի կույտերի մեջ, զարմանքով հայտնաբերի, որ Սումգայիթում տեղի ունեցածի առթիվ ցավակցության ու վրդովմունքի նամակներ կարելի է միայն անձնական արխիվներում գտնել: Ի՞նչ կասի այդ պատմաբանը, երբ իմանա, որ Սումգայիթից փախած հայերը, իրենք աղքատ դարձած, փող են փոխանցել Արգամասի երկաթուղային աղետը վերապրած մարդկանց համար, բայց որևէ մեկ թերթում զուր կփնտրի նա սումգայիթցիների օգնության ֆոնդի մասին հիշատակում» :

Ս.Ջոլյանը կրկնում էր 19-րդ կուսկոնֆերանսում պատգամավոր Գրիգորի Բակլանովի միտքն այլ ձևով. «ով սումգայիթյան օրերին գերադասեց լուռ մնալ և նույն բանին էր կոչում մյուսներին և հստակ չասաց, թե ում հետ է ինքը՝ դահճի՞, թե՞ զոհի, վաղն անպայման կկանգնի այն հարցի առջև, թե ի՞նչ է լինելու ինքը՝ դահի՞ճ, թե՞ զոհ» [Ս.Ջոլյան, Տան խաղաղությունը. Եղբայրություն և արդարություն, Նամակ Երևանից, «Երեկոյան Երևան», 11.11.1988,;Տե՛ս նաև «Век 20-ый и мир», 10., 1988]:

Ամփոփելով իբրև ներկա ժամանակի պատմագետ, ցանկանում ենք հակիրճ պատասխանել վերոնշյալ բաց նամակում հարցադրմանը .

Հարգելի պարոն Զոյա՛ն:

Իբրև պատմաբան, ցավով ենք նշում, որ այսօր, այո՛ , սոււմգայիթյան ողբերգության ամբողջական պատկերի վերհանումը կծծի, սահմանափակ ու հակասական տեղեկատվության պատճառով չափազանց բարդ է: Մեր խնդիրը բարդանում է նաև նրանով, որ մինչ օրս առկա է ձեր իսկ կողմից արձանագրված մեկ այլ իրողություն՝ «առանց ոչինչ փոխելու ամեն ինչ լուծելու արմատացած վտանգավոր սովորույթը»: Նաև ցավով ենք նշում, որ այսօր մեզանում առավել վառ է դրսևորվում հենց մեր՝ հայ մտավորականության մեծամասնության իներտ կամ անտարբեր վերաբերմունքը հանրույթին հուզող ազգային հիմնախնդիրներին: Այսօր ևս մենք կանգնած ենք ձեր իսկ ձևակերպումով՝ «մեր հասարակությունը արդար վերակարգավորելու խնդրի առջև», սակայն և ոչ մեկիս համար գաղտնիք չէ, որ դարձյալ չեն բարձրաձայնվում, շրջանցվում կամ ավելին՝ աղավաղվում, կոծկվում կամ բացարձակ լռության են մատնվում ճշմարտությունները: Այսօր ևս, չնայած վտանգված է հայության՝ իր քաղաքակրթության տերը լինելու իրավունքը, զանգվածային լրատվության պաշտոնական միջոցները մեզ «քարոզում են» համբերատարվար ժվածություն իրավիճակին : Դուք երիցս ճշմարիտ գտնվեցիք, երբ ձեր նամակում գրում էիք. «Նրանք, ովքեր ուզում էին կոծկել Ղարաբաղի պրոբլեմը, հարկադրված եղան լռության մատնել նաև Սոււմգայիթը»: : Եվ այսօր մենք ցավով ենք նշում, որ ճշմարտությունների կոծկումը կամ խեղաթյուրումը, համազգային խնդիրների լուծմանը անձնական վերաբերմունքի պակասը կամ դրանց առհասարակ անհաղորդ գտնվելը, համազգային ողբերգություններին ու պարտություններին սեփական մեղքի բացակայության զգացողությունը կամ էլ անհանդուրժողական պաթոսը վաղ թե ուշ ծնում են նոր ողբերգություններ, առավել մեծ կորուստներ, անսահման վիշտ ու ցավ: Հենց նման մտայնությամբ, խոհերով և զգացողություններով փորձել ենք երկխոսության մեջ մտնել պատմական այն ժամանակի հետ, որի ականատեսն ու վկան ենք եղել, խորհել և վերհանել ողբերգության բաց մնացած հարցերը, ճշմարտությունները Սոււմգայիթի մասին:

Գրականության ցանկ

Буркова И., 1988, Сумгаитский процесс, “Советский Карабах”.

Шейнис В., 1988, Уроки карабахского кризиса, “Век 20-ый и мир”, N 10, М.

Сергеев А., 1988, Ереван -Степанакерт, В особом положении, “Семья”, N 48, 26.10, М.

Пральников А., 1988, Сумгаитское дело: факты и боль, Московские новости”, N 44, 30 .10, М.

Василевский Ал., 1988, Туча в горах , “Аврора”, N 10, Ленинград.

Золян С, 1988, Письмо из Еревана, “Век 20-ый и мир”, N 10., М.

Овчаренко Н., 1988, З. Кадымбеков, Уроки и решения, “Правда”.